Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
հուլիսի 30-ի N 857 - Ն որոշման

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԱԴՈՆՑ ՓՈՂՈՑԻ N 6/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻՑ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՎԱՃԱՌՔԻ

1. Պետական ոլորտի ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանակներում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ադոնց փողոցի N 6/1 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարանների և ավտոկայանատեղիների երրորդ փուլի վաճառքն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 216-Ն որոշման 1-ին կետով հաստատված վաճառքի պայմաններով՝ ելնելով հետևյալ փոփոխություններից՝

1) հավակնորդը (ներկայացուցիչը) համակարգի կողմից իրեն ներկայացված հասանելի բնակարանների ցանկից կայքում իրավունք ունի ընտրելու ցանկացած թվով բնակարան.

2) պետության և կառուցապատողի միջև կնքված՝ բնակելի և ավտոկայանատեղիի նշանակության տարածքների առուվաճառքի նախնական պայմանագրում հիմնական պայմաններից փոփոխությունն է ավելացվող ծավալը՝ առնվազն 25 բնակարան և առնվազն 25 ավտոկայանատեղի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱԼ Գ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

15_857